ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 Թ. ՀՈՒԼԻՍԻ 16-ԻՑ 18-Ը ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (Ք. ՍՈՖԻԱ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Վարդան Կոստանյան, ՀՀ ՏԿԵՆ նախարարի տեղակալ

2. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**

   Բուլղարիայի Հանրապետություն (ԲՀ), ք. Սոֆիա, 2025 թվականի հուլիսի 16-ից 18-ը

3. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Բուլղարիայի Հանրապետության կառավարություն

4. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   Մասնակցություն Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության հարցերով միջկառավարական հանձնաժողովի իններորդ նիստին:

5. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ՝**

   Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության հարցերով միջկառավարական հանձնաժողովի իններորդ նիստին քննարկվել են երկու երկրների միջև տեխնոլոգիական, ներդրումային և գիտահետազոտական համագործակցության խորացման հնարավորությունները, համատեղ ծրագրերի իրականացումը բարձր տեխնոլոգիաների և նորարարության, տրանսպորտային և ենթակառուցվածքային ոլորտում: Հանդիպմանը կողմերը քննարկել են Հայաստանի Բուլղարիաի միջև տնտեսական, արդյունաբերական և բարձր տեխնոլոգիական ոլորտներում համագործակցության ընդլայնման հնարավորությունները, Հայաստան–Բուլղարիա երկկողմանի հարաբերությունների ընթացքը, տարածաշրջանային և միջազգային վերջին զարգացումները:

6. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

   Հանդիպումներ են կայացել Բուլղարիայի փոխվարչապետ Աթանաս Զաֆիրովի, Բուլղարիայի էկոնոմիկայի և արդյունաբերության նախարար Պետար Դիլովի, Բուլղարիայի

փոխվարչապետ, տրանսպոնտի և կապի նախարար Գրոզդան Կարաջովի և Բուլղարիայի փոխվարչապետ, նորարարությունների և աճի նախարար Տոմիսլավ Դոնչևի հետ: Հանդիպումների ընթացքում կողմերը կարևորել են Հայաստանի և Բուլղարիայի միջև հարաբերությունների զարգացումը՝ առանձնացնելով տրանսպորտի և ենթակառուցվածքների, կապի, հեռահաղորդակցության և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ ոլորտներում համագործակցությունը շարունակելու պատրաստակամությունը:

7. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Հանդիպման ընթացքում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բուլղարիայի Հանրապետության կառավարության միջև միջազգային ավտոմոբիլային ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների մասին» 2019 թվականի հոկտեմբերի 28-ին ստորագրված համաձայնագրի մեջ փոփոխություններ կատարելու մասին արձանագրություն:

8. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ՝ ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Բուլղարիայի փոխվարչապետ, տրանսպոնտի և կապի նախարար Գրոզդան Կարաջովը պաշտոնապես հրավիրել է Տարածքային Կառավարման և Ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանին մասնակցելու «Խաչմերուկ բոլոր ուղղություններով՝ Սևծովյան տարածաշրջանը որպես տրանսպորտային միջանցքների ռազմավարական բաղադրիչ» խորագրով նախարարական համաժողովին: Նախարարական համաժողովին կքննարկեն ենթակառուցվածքային և ներդրումային հնարավորությունները, ինչպես նաև ռազմավարական կարևոր միջանցքներում ապագա զարգացման արդյունավետ կառավարման համար համատեղ կայուն լուծումներ գտնելու հնարավորությունները: Համաժողովը տեղի կունենա սույն թվականի սեպտեմբերի 18-ից 19-ը Բուլղարիայի Սոֆիա քաղաքում:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

21.07.2025թ.